ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը N 51
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 1997.04.10/7
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 14.03.1997

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 14.03.1997
Ստորագրման ամսաթիվը 14.03.1997
Վավերացման ամսաթիվը 14.03.1997
Ուժը կորցնելու ամսաթիվը

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Լ. Տեր-Պետրոսյան
14 մարտի 1997 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 1997 թվականի N 51
քաղ. Երևան

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39 հոդվածի երրորդ մասի և 59 հոդվածի պահանջների, Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Սահմանել համայնքի սեփականության գույքի ցանկը՝ ըստ համայնքների, համաձայն NN 1-10 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի նախարարությանը՝ երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն համապատասխան ոլորտում նախատեսվող կազմակերպական-կառուցվածքային փոփոխությունների և դրանց հիման վրա ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, ոռոգման, բնակարանային տնտեսության, ճանապարհային և տրանսպորտային համակարգերից համայնքի սեփականության գույքը տարանջատելու և համայնքներին հանձնելու վերաբերյալ:

3. Համայնքների ղեկավարներին՝ Հայաստանի Հանրապետության մարզպետների միջոցով՝

ա) Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների նախարարություն ներկայացնել առաջարկություն «Հայաստանի Հանրապետության պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման 1995 թվականի ծրագրի մասին» և «Հայաստանի Հանրապետության պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման 1996-1997 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ընդգրկված ձեռնարկությունների գույքային համալիրներից սույն որոշման 1-ին կետով սահմանված համայնքի սեփականության գույքի ցանկին համապատասխանող օբյեկտներն առանձնացնելու և համայնքին որպես սեփականություն հանձնելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների նախարարությանը՝ ձեռնարկությունների սեփականաշնորհման նախապատրաստական փուլում քննարկել համայնքների ղեկավարների առաջարկությունները և Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել համապատասխան առաջարկություն.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն սույն որոշման 1-ին կետով սահմանված համայնքի սեփականության գույքի ցանկին համապատասխանող գերատեսչական ենթակայության գույքը համայնքին որպես սեփականություն հանձնելու վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ համայնքների ղեկավարների, շահագրգիռ նախարարությունների ու գերատեսչությունների հետ համատեղ մինչև 1997 թվականի հուլիսի 1-ը իրականացնել սույն որոշման 1-ին կետով սահմանված համայնքի սեփականության գույքի, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքներին հանձնման և ընդունման գործընթացը:

5. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքների և գյուղերի տարածքներում գտնվող ու որևէ տնօրինություն չունեցող վթարային (քանդման ենթակա) պետական բնակելի և այլ շենքերն ու շինությունները

Քարաշեն	նախադպրոցական հիմնարկ մշակույթի տուն գրադարան սոցիալ-կենցաղային նշանակության այլ շենքեր և շինություններ եկեղեցի հուշարձաններ ***(Տողը հանվել է 05.02.98 N 49)*** ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ ներհամայնքային նշանակության ջրահեռացման համակարգ ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգ վարչական շենք ներհամայնքային փողոցներ և հրապարակներ ներհամայնքային նշանակության ճանապարհներ ներհամայնքային կամուրջ գերեզմանատուն պատգամավորների նախկին գյուղական խորհրդի գործկոմին պատկանող մեքենասարքավորումներ և այլ գույք
Հարթաշեն	նախադպրոցական հիմնարկ մշակույթի տուն գրադարան սոցիալ-կենցաղային նշանակության այլ շենքեր և շինություններ եկեղեցիներ հուշարձաններ հուշարձան-աղբյուր ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգ վարչական շենք ներհամայնքային փողոցներ և հրապարակներ ներհամայնքային նշանակության ճանապարհներ ճաշարանի շենք խանութի շենք ալրաղաց գերեզմանատուն պատգամավորների նախկին գյուղական խորհրդի գործկոմին պատկանող մեքենասարքավորումներ և այլ գույք
Վերիշեն	նախադպրոցական հիմնարկ մշակույթի տուն գրադարան արտադպրոցական կենտրոն սոցիալ-կենցաղային նշանակության այլ շենքեր և շինություններ եկեղեցի հուշարձան հուշարձան-աղբյուրներ ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգ ներհամայնքային նշանակության ջրահեռացման համակարգ ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգ վարչական շենք ներհամայնքային փողոցներ և հրապարակներ ներհամայնքային նշանակության ճանապարհներ ներհամայնքային կամուրջներ գերեզմանատուն պատգամավորների նախկին գյուղական խորհրդի գործկոմին պատկանող մեքենասարքավորումներ և այլ գույք